

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №2-3 (31-32) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 655

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԵՐԻ ԵՎ ԲԱԶՄԱՀԱՏՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ  
Ն.Ա.ՄԻՆԱՍՅԱՆ

*Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա, Երևան, Բասիակյան 36*  
*e-mail: [nouneh\\_minasian@yahoo.com](mailto:nouneh_minasian@yahoo.com)*

Համաշխարհային գրատպության բնագավառում մեծ տեղ են զբաղեցնում մատենաշարերն ու բազմահատոր հրատարակությունները: 1960-1980թթ. գրքի նկատմամբ պահանջարկը մեծանում է, և, բացի առանձին հրատարակություններից, տպագրվում են բազմաթիվ հատորյակներ և մատենաշարեր: Մրանցում ստեղծագործություններն ամփոփված են կամ ըստ ժանրի՝ «Արկածային գրադարան», «Միջնադարյան քնարերգություն», կամ ըստ կրթական ծրագրերի՝ «Դպրոցական գրադարան», «Ուսանողական գրադարան», կամ ըստ արժևորման՝ «Գրական հուշարձաններ» և այլն: Հոդվածում քննարկվում են 1960-1980թթ. Հայաստանում հրատարակված մատենաշարերի և բազմահատոր հրատարակությունների ձևավորման միտումները:

**Բանալի բառեր.** մատենաշար, բազմահատոր հրատարակություն, գրքի ձևավորում, գրքարվեստ:

**Ներկայացված է խմբագրություն 12.03.2016թ**

Հայ գրատպության մեջ առաջին բազմահատորյակներն սկսել են հրատարակել Մխիթարյան միաբանությունում: Ընդ որում առաջին նմանատիպ գրքերը նվիրված էին հայոց պատմությանը, հայագիտությանը և աստվածաբանությանը: Այս շարքում կարելի է նշել Միքայել Չամչեանցի «Պատմություն Հայոց: Ի սկզբանե աշխարհի մինչև ցամ Տեառն 1784» (1784թ.) եռահատոր և «Մեկնութիւն Սաղմոսաց» (1815-1823թթ.) տասնհատորյա աշխատությունները, Հովսեփ Գաթրոջյանի դեռևս 1849-1852թթ. հրատարակված համաշխարհային պատմությանը նվիրված երկհատոր աշխատությունը, Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատումը» (1912-1927թթ.):

Այս հրատարակությունները ձևավորված էին ձեռագիր մատյանների սկզբունքով: Բուն տեքստը վերցված էր շրջանակի մեջ, յուրաքանչյուր էջի վերջում գրվում էր հաջորդ էջի առաջին բառը, առկա էին լուսանցային նշումներ: Ձեռագրային մոտեցմամբ էին լուծված նաև սկզբնազարդերը, վերջնազարդերն ու սկզբնատառերը: Նշենք, որ 20-րդ դարի վերջում այս գրքերի մի մասը վերահրատարակվեց՝ պահպանելով առաջին հրատարակությունների տեսքը: Նման հրատարակություններն անվանում են ռոտապրինտային և կրկնօրինակում են բնօրինակը: Այս գրքերի շարքում էին Չամչեանցի «Հայոց պատմությունը» (1984-1985թթ.), «Նոր բառագիրք Հայկազեան լեզուի» (երկու հատոր, 1836-1837թթ., վերահրատարակում՝ 1979-1981թթ.), Ա.Խուդաբաշյանի «Հայ-ռուսերեն բառարանը» (երկու հատոր, 1838, վերահրատարակում՝ 1986-1987թթ.) և այլն:

Գրատպության զարգացման հետ, 20-րդ դարի սկզբին սկսեցին հրատարակել փափուկ կազմով ոչ մեծ գրքեր, որոնք միավորված էին հիմնականում ըստ ժանրերի:

Այս գործընթացում շատ կարևոր էր Հովհաննես Թումանյանի դերը: 20-րդ դարի սկզբին հայտնի մանկագիրը հիմնել և հրատարակել է «Մանկական գրադարան» մատենաշարը: Առաջին գրքույկը «Շունն ու կատուն» հեքիաթն էր, որը լույս է տեսել 1908 թ.: Հետագայում, 1909 թ. հրատարակվեցին Թումանյանի մյուս հեքիաթները՝ «Անբախտ վաճառականները», «Աղվեսը», «Անհաղթ աքլորը», «Օիտը» և այլն:

Այս գրքերը նկարագարող էր Գ.Երիցյանը (գրաֆիկ, թատերական ձևավորող, 1879-1965թթ.): Մատենաշարի առաջին գրքերը խոշոր ֆորմատի էին, ուղղահայաց: Հետագայում նկարիչն անցնում է ավելի փոքր, հորիզոնական ֆորմատների: Պատկերագրողումների առանձնահատկությունն այն է, որ նկարիչը խիստ առանձնացնում է տեքստային և պատկերային տարածքները: Տեքստերը տպագրվում են գունավոր ֆոնի վրա, իսկ պատկերները տեղադրվում են տարբեր կտրվածքով շրջանակների մեջ: Գ.Երիցյանի պատկերներն արված էին չորս-հինգ հիմնական գույներով: Նկարիչը կերպարները ձևավորել է իր ժամանակի միջավայրին համապատասխան:

Գ.Երիցյանի ստեղծագործությունները ոճական առումով բավականին պարզ էին, հիմնական գործող անձինք առանձնանում էին վառ, լուրջ գույների միջոցով և հիմնականում տեղադրվում էին առաջին պլանում: Ծավալայնությունը պայմանական էր, ստեղծվում էր մանր շտրիխների միջոցով: Երիցյանը մեծ ուշադրություն էր դարձնում տառատեսակի ընտրությանը՝ հատկապես վերնագրերը գրելիս: Շատ հաճախ տառերը հանդես են գալիս որպես ձևավորման մաս (հատկապես գլխատառերը) և ամբողջացնում են գրքի ձևավորման կառուցվածքը: Թեև գրքերը տարբեր չափսերի էին, սակայն կազմի վրա նշվում էր մատենաշարի անվանումն ու գրքի հերթական համարը:

Մատենաշարերն առավել լայն տարածում են գտնում հատկապես խորհրդային տարիներին: 1920-1930-ական թվականներին սկսում են տպագրվել փափուկ կազմով համեմատաբար էժան գրքույկներ, որոնք հաճախ միավորվում են որոշակի սկզբունքներով կենսագրական, ուսուցողական, քարոզչական և այլ:

Հետագայում այս միտումը շարունակվում և զարգանում է՝ որոշակի փոփոխություններ կրելով թե՛ ոճական, թե՛ կառուցվածքային առումներով:

1960-1980թթ. գրքի նկատմամբ պահանջարկը մեծանում է, և, բացի առանձին հրատարակություններից, տպագրվում են բազմաթիվ բազմահատորյակներ և մատենաշարեր: Մրանցում ստեղծագործություններն ամփոփված են կամ ըստ ժանրի՝ «Արկածային գրադարան», «Միջնադարյան քնարերգություն», կամ ըստ կրթական ծրագրերի՝ «Դպրոցական գրադարան», «Ուսանողական գրադարան», կամ ըստ արժևորման՝ «Գրական հուշարձաններ» և այլն:

Գրքերի շարքերով հրատարակությունները մեծ տարածում են ստանում հատկապես գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականության ասպարեզում:

Նշված ժամանակաշրջանում մատենաշարերի գրքերի ձևավորումը հիմնականում կատարվում է նույնատիպ արտաքին տեսքով: Որպես կանոն, գործ ունենք միատիպ ֆոնի, տառատեսակի և ոճի հետ: Սովորաբար նույն ոճական սկզբունքով են լուծված նաև վերնագրերը: Մա, մի կողմից, հեշտացնում է գրքի որոնումը, մյուս կողմից՝ ունի որոշակի գեղագիտական նշանակություն: Ստեղծվում են նաև մատենաշարերի տարբերանշանները, որոնք հիմնականում կազմվում են նրանց անվանումների սկզբնատառերով:

Մատենաշարերի կազմերի ձևավորման մեջ այս տարիներին կարելի է նկատել երկու հիմնական միտում, որոնք հաճախ պայմանավորված էին կազմի նյութով և որակով:

Գրքերի թղթե կազմերի կամ սուպերշապիկների վրա ավելի ակտիվ է դառնում ֆիգուրատիվ պատկերման մոտեցումը: Այստեղ կարող են օգտագործվել ինչպես ներտեքստային ձևավորումների դրվագներ, այնպես էլ դիմանկարներ ու լուսանկարներ:

Մովլաթե կազմով գրքերում առավել գործածական է դաջվածքային ձևավորումը, որը երբեմն ներկվում է: Այսպիսի ձևավորումներում ավելի հաճախ օգտագործվում են նախշեր, զարդամոտիվներ կամ խորհրդանշական պատկերներ:

1960-1980-ական թվականներին հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում մանկապատանեկան գրականության հրատարակմանը և կտրուկ աճեց հենց այս տարիքային խմբին հասցեագրված մատենաշարերի թիվը: Հիշատակության է արժանի «Արկածային գրադարան» մատենաշարը, որն այդ տարիներին տպագրվել է երկու անգամ:



**Նկ. 1. Արկածային գրադարան, շապիկ, 1-ին հրատարակություն**

Առաջին հրատարակությունը, որի համար հիմք է ծառայել ռուսական մատենաշարը, լույս է տեսել 1957-1963 թվականներին «Հայպետհրատ»-ում: Գրքերի ընդհանուր ձևավորման հեղինակն էր Մ.Բաղդասարյանը (նկ.1), սակայն տեքստային նկարները վերցված էին ռուսական հրատարակություններից: Մասնավորապես՝ Ի.Եֆրեմովի «Անդրոմեդի միզամածությունը» (1963) վեպի պատկերազարդումները պատկանում են Ա.Պոբեդինսկուն (ռուս գրաֆիկ, դիզայներ, 1904-1979թթ.): Ձևավորել է մի շարք ամսագրեր և գրքեր: Ի.Եֆրեմովի գրքերի առաջին ձևավորողն է: Դ.Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և զարմանալի արկածները» (1958) վեպի նկարազարդումները Ժ.Գրանվիլին են (ֆրանսիացի նկարիչ և ծաղրանկարիչ, 1803-1847թթ., ով ձևավորել է բազմաթիվ գրքեր, որոնց թվում Մ.Սերվանտեսի «Դոն Կիխոտը», Ջ.Սվիվլթի «Գուլիվերի ճանապարհորդությունը»): Սակայն մատենաշարի բոլոր գրքերի արտաքին տեսքը լուծված է մեկ ընդհանուր ոճական սկզբունքով:

Գրքերի կազմերը ձևավորված են վրաները դաջված և ներկված նկարների միջոցով: Ընդ որում կազմի նախշերի մեջ կարելի է տեսնել դրվագներ տարբեր ստեղծագործություններից, իսկ կենտրոնական մասում հենց տվյալ ստեղծագործության մի դրվագի պատկերազարդում է:

Տիտղոսաթերթի բացվածքները կառուցված են բազմահատորյակների համար բնորոշ ձևով, քանի որ ավանտիտուլների վրա մատենաշարի և հրատարակչության անվանումից բացի առկա է նաև հատորի համարը: Բուն տիտղոսաթերթի վրա տվյալ ստեղծագործության տվյալներն են: Այս երկու թերթերում կազմավորիչ դեր են խաղում կարմիր շրջանակը և կարմիր գրությունները: Երկու թերթերի վրա երկուական պատկեր է, որոնք բնորոշում են տվյալ ստեղծագործության ամենաէական դրվագները:

1980-ականներին մատենաշարը վերահրատարակեց նախ «Մովետական գրող», ապա՝ նորաբաց «Արևիկ» հրատարակչությունը: Այս անգամ շարքում ներառվեցին նաև հայ հեղինակների ստեղծագործություններ: Նկարիչներն էին նախ՝ Ա.Կարազյանը, հետագայում՝ Կ.Թերզյանը:

Այս հրատարակչության կազմի արտաքին ձևավորումն ավելի պարզ էր և հիմնականում բաղկացած էր դաջվածապատկերից և հիմնական տեղեկություններ պարունակող տեքստային մասից: Տիտղոսաթերթերում բացակայում է հատորը նշող համարը, իսկ ավանտիտուլը նեկայացնում է ստեղծագործության մեկ դրվագի էջային նկարազարդում: Պատկերներ կան նաև տիտղոսաթերթերի վրա: Սրանք հիմնականում նշում էին գործողությունների վայրը (օրինակ՝ Վ.Մալիկի «Ուռուս Շեյթանի դեսպանը», Ա.Գրինի «Շողոռուն աշխարհ: Ալիքների վրայով վագոլը» գրքերում նավերն են, Հ.Ռ.Հագարթի «Մոնթեսումայի դուստրը» գրքում՝ ամրոցը, Գ.Էմարի «Ամուր ձեռքը: Գամբուսին» գրքում՝ պրերիան):

Յուրաքանչյուր նոր ստեղծագործություն սկսվում էր էջային պատկերով, որը հիմնականում կամ կրում էր խորհրդանշային բնույթ (օրինակ՝ Գ.Էմարի «Ամուր ձեռքը» վեպի տիտղոսաթերթի վրա պատկերված են հրացաններ և կովբոյական լայնեզր գլխարկ) կամ սյուժետային որևէ դրվագ:

Կիսաէջային պատկերով է սկսվում յուրաքանչյուր նոր գլուխ: Այս մատենաշարի որոշ գրքերում ևս օգտագործված են այլ հրատարակությունների ձևավորումները: Օրինակ՝ Ժ.Վեռնի «Տասնհինգամյա նավապետը» գրքում օգտագործվել են Ա.Մեյերի ձևավորումները (Ֆրանսիացի նկարիչ, ծաղրանկարիչ, 1844-1899թթ.):

«Հայ քնարերգություն» մատենաշարը, որը լույս է տեսել 1981-1988 թվականների ընթացքում «Մովեսական գրող» հրատարակչության շնորհիվ, ձևավորել է Ն.Հակոբյանը: Սա ոչ մեծ ֆորմատի գրքերի շարք է, որն ընդգրկում է տասնմեկ գիրք՝ ամփոփելով անտիկ շրջանի և միջնադարի հեղինակների երկեր (Նաղաշ Հովնաթան, Գրիգորիս Աղթամարցի, Ներսես Մոկացի, Հովհաննես Երզնկացի և այլն):


Գրքերի սուպերշապիկներն ունեն միևնույն ոճական կառուցվածքը, սակայն լուծված են տարբեր գունային մոտեցումներով: Ընդհանուր ֆոնը սև է, որի եզրաշերտը լուծված է որևէ ակտիվ գույնով: Առաջին գրքից բացի, բոլոր գրքերի ձևավորումը կատարված է միջնադարյան ձեռագրերի խորանների տեսքով: Ընդ որում խորանատեսակները չեն կրկնվում, սակայն բոլոր պատկերները միավորում է խորանի կենտրոնում գտնվող կանթեղը: Առանձնացված են սկզբնատառերը՝ ոճավորված և լուծված շրջանակի ու խորանի գույներով:

Մատենաշարի առաջին պրակը՝ «Հայ քնարերգություն. Անտիկ շրջանից մինչև Ը դար» գիրքը, ունի փոքր-ինչ այլ ձևավորում: Այստեղ կազմանկարի հիմնական մոտիվը ոչ թե խորանն է, այլ ավելի հին մի խորհրդանիշ՝ արեգակի և հավերժության նշանը: Այն պատկերված է երկու անգամ՝ հայելային լուծումներով: Տառատեսակը թեև մոտ է մյուս գրքերի շրիֆտին, սակայն ունի այլ կառուցվածք և երկու ոճային մեկնաբանություն:

Գրքերի կազմերը ձևավորված են ոչ մեծ, տարբեր կերպ ոճավորված շրջանների միջոցով, որոնց մեջ ոսկեգույնով գրված է հեղինակի անունը: Կազմերը շրջանակված են դաջված զարդերով: Ֆրոնտիսպիսները ներկայացնում են քառանկյունի շրջանակներ, որոնց կողմերի կենտրոնում որևէ զարդամոտիվ է պատկերված՝ հիշեցնելով միջնադարյան ձեռագրերի լուսանցքները:

Ընդհանուր ոճով են լուծված նաև տիտղոսաթերթերը, որոնք շեշտվում են նախշի ակտիվ գույնով:

Այս մատենաշարի ձևավորման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում շարքի խորհրդանիշը, որը կառուցված է շրջանի մեջ ներգծված եռաթերթ ծաղկի տեսքով: Յուրաքանչյուր թերթիկի մեջ գրված է մեկ տառ՝ Հ, Բ, Մ:



Նկ. 2. Համաշխարհային գրականություն պատանիների համար

Բավականին հետաքրքիր է ձևավորված «Համաշխարհային գրականություն պատանիների համար» մատենաշարը (1988-1991թթ., ձևավորման հեղինակ՝ գեղանկարիչ, գրաֆիկ Ս.Լաճիկյան, ծնվ. 1953թ.): Շարքի խորհրդանիշ է ընտրվել Անահիտ աստվածուհու գլխաքանդակի ոսկեգույնով դաջված պատկերը (նկ. 2), որը ներառված է մատենաշարի՝ շրջանագծով գրված անվանման մեջ: Կազմի պատկերազարդման հիմնական տարրը գունավոր ուղղանկյունին է: Յուրաքանչյուր գիրք ունի ուրույն գունային լուծում:

Կոնակի վրա նույնպես կան նոր մոտեցումներ: Շորինվածքը կազմված է երկու գունավոր ուղղանկյունիներից:

Վերին ուղղանկյունու մեջ պատկերված է վառվող կանթեղը, ստորինի մեջ գրված է վերնագիրը: Այս մատենաշարի հիմնական ձևավորումները շուրջստիտուլների վրա են և պատկերում են կամ խորհրդանշային տեսարաններ (օրինակ՝ «Ցեղին սիրտը» (արևմտահայ անթոլոգիա) գրքում ժայռին նստած արծիվ), կամ դրվագներ գրական երկից (օրինակ՝ Ա.Դյումայի «Երեք հրացանակիրները» գրքում):

1980-ականներին Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը սկսեց «Ուսանողի գրադարան» մատենաշարի հրատարակումը: Այս շարքի ձևավորումը մինիմալիստական է: Կազմի վրա վերնագրի հայերեն տարբերակը գրված է խոշոր ոսկեգույն տառերով, իսկ դրանից ներքև՝ դաջված տարբերակով նշված է բնագրի լեզվով վերնագիրը: Օրինակ՝ Հումբոլդտի «Ռոդոսական» գրքի կազմին հունարեն, «Ֆրանսիական կլասիցիզմ» գրքի կազմին՝ ֆրանսերեն և այլն: Սակայն մատենաշարի որոշ գրքերի կազմերին դաջված տեքստը ռուսերեն է, ինչը, մեր կարծիքով, մի փոքր անտրամաբանական է (օրինակ՝ «XX դարի արտասահմանյան դրամատուրգիա» կամ «Մփյուռքահայ պատմվածք» գրքերում): Այդ կազմերի կենտրոնական մասում քառակուսու մեջ ներգծված զարդամոտիվներ են, որոնք չեն կրկնվում:

1970-1980թթ. լույս տեսած «Հայ դասական գրադարան» մատենաշարում ձևավորման հիմնական տարրերը կազմերն ու սուպերշապիկներն են: Ձևավորման հեղինակը՝ Մ.Սոսոյանը (գեղանկարիչ, գրաֆիկ, բանաստեղծ, 1928-1992թթ.): Ձևավորել է Մ.Տվենի «Թոմ Սոյերի արկածները», Հ.Թումանյանի «Գիքորը», Է.Հեմինգուեյի «Ծերունին և ծովը», Մ.Սարգսյանի «Տիրամոր պատկերի առջև», Ե.Չարենցի «Ամբոխները խելագարված», Ն.Չարյանի «Մասունցի Դավիթ», Հայկ Խաչատրյանի «Էրեբունի») սուպերշապիկների վրա գծային ոճով պատկերում է հեղինակի դիմանկարը, հաճախ՝ ստեղծագործության ժամանակը բնորոշող որևէ պատկեր: Վերջինս հիմնականում օգտագործվում է այն ժամանակ, երբ գրքի մեջ ներառված են մի քանի հեղինակների ստեղծագործություններ: Պատկերները հիմնականում զբաղեցնում են սուպերշապիկի վերին մասը, իսկ ստորին մասում գունավոր երիզի վրա սպիտակ ձեռագիր տառերով գրված է հեղինակի անունը: Այս մատենաշարում շարունակվում է դեռևս 20-րդ դարի վաթսուհանյան թվականներից սկիզբ առած այն միտումը, երբ շարքերի տարբեր գրքեր լուծվում են տարբեր գույներով:

Բուն կազմերը ձևավորված են դաջվածքային տեխնիկայով: Այստեղ որպես հիմնական տարր օգտագործվում է դասականությունը խորհրդանշող այս պատկերը:

Նույն սկզբունքով են լուծվում նաև «Ռուս դասական գրադարան» մատենաշարի գրքերը (նկարիչ՝ Ռ.Ջուլիակյան): Այս ձևավորման կարևոր տարր է դառնում մատենաշարի սկզբնատառերով ձևավորված շրջանաձև տարբերանշանը: Այս շարքի գրքերում ավանտիստիկ վրա ռուսերենով նշվում էր հեղինակի անունը, վերնագիրն ու հրատարակչական տվյալները (հայտնի է, որ ԽՍՀՄ-ում հրատարակված բոլոր գրքերն ունեին ռուսերեն տվյալներ վերջին էջերին):

Նույն ժամանակաշրջանում լույս է տեսնում նաև «Նշանավոր մարկանց մասին» մատենաշարը (1969-1981թթ.): Դրա նմուշները («Թումանյանի կյանքը», «Վահրամ Փափագյան», «Հրաչյա Ներսիսյան») ոչ մեծ ֆորմատի գրքեր էին: Տառատեսակը թեև միանման էր, սակայն մշակված էր տարբեր գույներով: Կազմի ձևավորման մեջ օգտագործված էին հեղինակների լուսանկարները: Սա բավականին ինքնատիպ լուծում էր, քանի որ մինչ այդ հեղինակների լուսանկարները հիմնականում տեղադրվում էին ավանտիստիկների վրա:

Որպես յուրօրինակ մատենաշար կարելի է դիտարկել նաև առանձին հեղինակների երկերի բազմահատոր հրատարակությունները:

Այս շարքում կարելի է նշել Մուրացանի (7 հատոր, 1961-1965թթ., նկարիչ՝ Հ.Մուրադյան), Ալ.Շիրվանզադեի (10 հատոր, 1958-1962թթ., նկարիչ՝ Կ.Տիրատուրյան), Դ.Դեմիրճյանի (14 հատոր, 1976-1983թթ., նկարիչ՝ Լ.Սադոյան) երկերի ժողովածուները:

Դրանք ձևավորված են նվազագույն միջոցներով, որոնցից հիմնականը կազմին զետեղված և ձևավոր գծանախշով շրջանակված տառն է, նաև՝ գլխագարդերն ու վերջնագարդերը: Ավանտիստույների վրա, որպես կանոն, առկա են հեղինակի լուսանկարները՝ երբեմն ֆաքսիմիլ ստորագրությամբ: Ընդ որում լուսանկարներն ընտրվում էին ըստ տվյալ հատորում ամփոփված ստեղծագործությունների ժամանակագրության: Կազմերի ձևավորման մեջ աչքի է ընկնում հեղինակների անունների գրությունը, որոնք հաճախ արված են ոսկեգույնով:

1960-1980թթ. տպագրվում են նաև մի շարք հանրագիտական հրատարակություններ, մասնավորապես՝ Հայկական սովետական հանրագիտարանը (13 հատոր, 1974-1987թթ.), Գ.Ստեփանյանի «Կենսագրական բառարանը» (3 հատոր, 1973թ.): Ինչպես ցանկացած գիտական և գիտահանրամատչելի գրականության մեջ, այստեղ ձևավորման հիմնական դերակատարությունն ստանձնում են լուսանկարներն ու գծապատկերները: Կազմի ձևավորումներում դարձյալ հանդիպում ենք դաջվածքների, ոսկով կատարած գրությունների:

«Ինչ է, ով է» մանկական հանրագիտարանը (4 հատոր, 1984-1987թթ.) ձևավորված է այլ սկզբունքով: Քանի որ այն նախատեսված էր դպրոցական տարիքի երեխաների համար, այստեղ, բացի լուսանկարներից, ներառված են նաև գունավոր պատկերներ, որոնք համահունչ են մանկական գրքերի ձևավորման սկզբունքներին:

Ուսումնասիրված ժամանակաշրջանում մատենաշարերի և բազմահատոր հրատարակությունների ձևավորման միտումներն այնքան մոտ էին կատարյալին, որ շարունակում են արդիական մնալ, իհարկե, համատեղվելով գրատպության ժամանակակից տեխնոլոգիաներին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղապյան Ա., Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, 484:
2. Բաղդասարյան Ա., Ինչպես է ստեղծվում գիրքը, Երևան, Զանգակ, 2010, 208:
3. Իշխանյան Ռ., Որն է առաջին հայ տպագիր գիրքը, Գրական թերթ, 1963, մայիսի 31:
4. Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, Հայպետհրատ, 1958, 256:
5. Ляхов В., О художественном конструировании книги. Системное проектирование.

Функциональный анализ, Москва, Книга, 1975, 92.

6. Сидоров А., Искусство книги, Москва, Дом печати, 1922, 102.

**РЕЗЮМЕ**  
**ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОГО ИЛЛЮСТРИРОВАНИЯ КНИЖНЫХ СЕРИЙ И**  
**МНОГОТОМНЫХ ИЗДАНИЙ**  
***Н.А.МИНАСЯН***

В сфере книгопечатания значительное место занимают книжные серии и многотомные издания. В 1960-1980гг. спрос на книги вырос и, в дополнение к отдельным изданиям, стали издаваться многочисленные многотомники и библиографические серии. В них литературные произведения сгруппированы либо по жанру - "Приключенческая библиотека", "Средневековая лирика", либо в соответствии с образовательными программами - "Школьная библиотека", "Библиотека студента", либо по принципу значимости данных произведений - "Литературные памятники" и так далее. В этих сериях оформление книг в основном выдержано в едином ключе, что, как правило, относится к фону, шрифту и стилю. Разные художники по-разному решают проблемы оформления, создавая новую традицию книжного искусства.

**SUMMARY**  
**AN EXTRACT FROM THE HISTORY OF THE ARMENIAN BOOK SERIES' AND**  
**MULTIVOLUME EDITIONS' ILLUSTRATIONS**  
***N.A.MINASIAN***

In the field of printing graphics a significant place occupies book series' and multivolume editions' illustration. In the 1960-1980-ies the demand for books has grown up and, in addition to individual publications, numerous multi-volume series and bibliographical editions were published. The literary works were grouped either by genre – adventure, poetry, or in accordance with target groups – for pupils, for students, or on the basis of the literal or historical significance of these works and so on. In these series the books are mainly designed in the same way: it generally refers to the background, font and style. Different artists have different approaches and solutions for the design challenges, which formed a new tradition in field of the book illustration.